

է ի Մանչսկսթր. նիւթը կ'ընդգրիէ Հայոց ծագումէն մինչև վերջին ժամանակները. գործը, իր ամբողջութեանը մէջ կարելի է նկատել ընդարձակ տևութիւն մը Հայ ազգային պատմութեան վրայ, իմաստասիրուէն՝ իր ձեռով՝ ընդլայնուած :

7. Գեղարվուեսք. գեղեցիկ արուեստից և գեղեցիկ զպութեանց վրայ բանախօսութիւն մը, Մանչսկսթր կարգացուած :

8. Հեղինաբանութիւն. ընդարձակ նօթեր՝ հայ մատենագրութեան տեսակէտով այնքան մեծ կարեռութիւն ունեցող այս երեսութիւն շուրջ կատարելի ուսումնաւիրութեան մը համար հաւաքքուած անշուշտ, երբեմն երբեմն մասնակի մանր ընդունումներով :

9. Խորհնացոյ վերաբերմամբ կատարուելիք ուսումնախօսիրութեան մը առթիւ գրուած նօթերու բազմախուռն տրցակ մը :

10. Մանրատառ գրուածքով հոծ էջերու ստուարագանգուած տրցակ մը, որ կը պարունակէ Եւրոպական զանազան քաղաքներու մատենագարանաց հայ ձեռագիրներէ շահեկան քաղուածքներ, ընդօրինակութիւններ, ցուցակազրութիւններ և տեղեկութիւններ :

11. Թարգմանութիւնի մի քանի բանասիրական և Եզրուարանական ուսումնախօսութեանց երոպացի գիտուններու :

12. Գրալան հատուածներու հաւաքուած մը, կարծես առանին զաստիսութեանց պատեհութեամբ փնջուած :

13. Թարգմանութիւն Շէքսրիլի Յուլիոս Կեսար, Մագպէթ և Յովհ. արքայ ողբերգութեանց (թերի) :

14. Ինքնազիր բարերգութիւն. «Փախուստ Արտաշէս Բ. ի» (Վենետիկ գրուած՝ 1857 ին, Հ. Եղ. Հիւրմիզի քննադատականով միասին):

15. Ինքնազիր բարովներ, իր կողմէ խօսուած :

16, 17, 18, 19. չորս տրցակներ խոսն նօթերու :

Մատենադարանապէս Ա. Արոոյ
Կիւրեղ. Վ. Դ. ԽՄՐԱՑԵԼԵԱՆ



Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԵՆ

Ա. Մ Ս Ս Օ Ւ Ե Ա Յ Լ Ո Ւ Ր Ե Բ

Անցնող նոյ. ամսուայ ընթացքին, Ս. Աթոռոյս Տիօրիկ ժաղովը ի նիստ գումարուեցաւ իրեւ վարչական մարմին Զ. իսկ իրքիւ Կոօնսիկան Ստանի հ անգամինը, նոյնպէս Ռւսումն. Խորիուրդը Հ անդամ, իրաքանչիւրը զրազելով՝ իր իրաւասութեան սահմանին մէջ եղած ինդիրներով:

Օ Եր. 4 նոյ. — Նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր Երեկոյին կատարուեցաւ Հրաշափառք իւ Յափոր ի Ս. Յարութիւն, Գիւտ խաչի վաղուան տանի առթիւ, կիրակամուտի պաշտամունք կատարուեցաւ հայապատկան Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ:

— Երեկոյին, Ժառանգաւորաց ուսուցիչներէն Պ. Ներսէս Թամամեան վարժարանի արաշին մէջ բանախօսուեց կրօնի ծագման և էռթեան մասին:

Զ Կիր. 5 նոյ. — Գիւտ խաչի տօնը, ըստ տօնացցի եւ տեղական աւանդութեան, մեծահանգիս շուքով կատարուեցաւ Ս. Յարութեան տաճարի Ս. Խուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Ըստ աւուրն պատշաճէ քարոզեց Ս. Պատրիարք Հայրը: Պատարագէն յետոյ, Նախագահութեամբ Ս. Պատրիարքին: որ զերսաւորուած էր ըստ աստիշանին և մասնակցութեամբ բոլոր միարանից, որոնք ամէնքն այ նմանապէս զգեստաւորուած էին, կինաց փայտի մասունքը առնուելով խաչգիւտի ստորերկրեայ եղանէն, թափօրով վախագութեան բարութիւն, եւ երից կարծէցաւ Ս. գերեզմանին շուքը նուիրական որբութիւնը կը հրէր Ս. Պատրիարքը, ամօնովանին ներքեւ:

Օ Եր 11 նոյ. — Երեկոյին բացումը կատարուեցաւ Պ. Հ. Մ. Մ. ի ընթերցատան՝ զանուցաշրջափակին մէջ, կը նախագահէր Ս. Պատրիարքը, որ այս աթիւ ազգու յորգաբարկան մը խօսեցաւ Երեխտասարցներուն. այս Հաստատութեան մէջ, որ առայժմ կը ծառայէ որպէս ընթերցարան, շուտով պիտի կազմակերպուի նաև բանախօսութեանց ընթացք մը:

Զ Կիր. 12 նոյ. — Ս. Պատարագի մէջոցին, Տ. Հայկազուն վրդ. քարոզեց Ս. Յակոբի տաճարին մէջ, բնարանն էր և թող մեզ զպարտիս մէր: բացատրեց թէ ներովամութիւնը որ իր խօսքին մէջ աստուածային առաքինութիւն մընէ: սիրոյ սկզբունքին ամենէն ընդհանրացեալ կերպն է, և պէսք է նկատուի բրիստոնէական բարյականի մեծագոյն կռուաններէն մին:

— Ցերեկին, Կիւլաբէներեան Մատենադարանի սրանի մէջ բանախօսեց Տ. Սիոն վրդ. նիւթ ունենալով և Աստեղազարդ երկինքը, զօր համեմեց գիտացիան տեսութիւններով և բարյական մըտածուներով: — Խոկ ընթերքէն վերէը, Հ. Բ. Բ. Միւթեան տարեկան շարքին Բ. Բանախօսութիւնը կատարեց Բարեփրականի սրահին մէջ, Ս. Աթոռոյ ուսուցիչ Պ. Գր. Միսալեան, եւ խօսեցաւ արդի տնտեսական տագնապին մասին:

— Տ. Կիւրեղ և Տ. Շաւարչ վարդապետներ ներկայ գտնուեցան և. Ք. Մ. Ընկերութեան գիշերային ազօթաժմուլին:

● Դը. 15 նոյ. — Ա. Պատրիարքը, Ընկերակցութեամբ դիւանապետ Պ. Նուրեանի այցելեց Երևանութեամբ կառավարիչին, վանքապատկան խնդրոյ մը մասին տեսակցութեան մը համար:

● Եզ. 16 նոյ. — Տ. Շաւարչ վրդ. յանուն պատրիարքարանի գնաց ներկայ գտնուել թէյառնապանի մը, որ սարքուած է, և. Ք. ի Տան մէջ, նոյն հաստատութեան հնագիտական բաժնին եղած նուէրներու առթիւ:

● Ուր. 17 նոյ. — Հաս Հին Տօմարին Հրեշտակապետաց նախատօնակի առթիւ, Երեխոյեան ժամերգութիւնը Ս. Պատրիարքի նախագահութեամբ և բովանդակ միարանութեան մասնակցութեամբ կատարուեցաւ Ս. Աթոռոյս չըշափակին համանուն վանուց մէջ:

● Եր. 18 նոյ. — Ա. Պատարագ մատուցուեցաւ Ս. Հրեշտակապետաց նոյն եկեղեցւոյ մէջ:

— Տ. Սմբատ Սրբազն, Ընկերակցութեամբ պ. դիւանապետին, գնաց Յովովէ, վանքապատկան գործին մասին տեսակցելու համար կառավարութեան հետ:

— Երեկոյին, վարժարանի սրահին մէջ բանախոսից Տ. Նորայր վրդ. նիւթն էր «Արարեները Հայոց պատութեան մէջ», և արարական ազդեցութիւնը Հայոց լեզուին, գրականութեան եւ մշակոյթին վրայ:

● Կիր. 19 նոյ. — Ա. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան տաճարի Հայկական Գողոզովայի վերնայարկ մատուց մէջ. Տ. Զգոն վրդ. խօսեցաւ քարոզվ. զոր Ընթերցողը կը տեսնեն և Սիոն և ի այս թիւին մէջ:

● Ուր. 24 նոյ. — Ա. Պատրիարքը Ընկերակցութեամբ Տ. Մերոս Սրբազն ներու և դիւանապետ պ. Կ. Նուրեանի կառավարութեան պալատ գնաց տեսնուելու համար Երևանէմի կառավարիչին հետ՝ Ս. Յարութեան տաճարի նորոգութեան կարեռ խնդրոյն առթիւ:

— Տնօրէն Ժողովոյ այս օրուան նիւթին մէջ, Տ. Շաւարչ վրդ. կարգուեցաւ Քարտուղար Ս. Տեղեաց, պաշտօն՝ որ է, գործադրութիւն հրահանգաց Տնօրէն Ժողովոյ, ի պահպանութեան դիւանի, ի պաշտպանութեան իրաւանց եւ ի քըննութիւն գործոց Ս. Տեղեաց:

● Կիր. 26 նոյ. — Տ. Սիրովէ վրդ. քառոզեց Ս. Յակոբայ տաճարին մէջ. բնարանն էր. «Հի նա փրկեացէ զժողովուրդս իւր ի մեղաց իւրեանց»:

— Երեկոյին Տ. Տիրան վրդ. Բարեգործականի տարեկան շարքի Պ. բանախօսութիւնը կատարեց Հայ Բարեսիրականի սրահին մէջ, եւ բազայի այսօրուան վիճակին վրայ:

● Դը. 28 նոյ. — Տնօրէն Ժողովոյ այս օրուան նիւթին մէջ «Սիոն» ամսաթերթի գերխմբագիր կարգուեցաւ Տ. Սիրովէ վրդ. ի աեղի Տ. Նորայր վրդ. ի, որ հրաժարական էր տուած:

● Դը. 29 նոյ. — Ա. Պատրիարքը մի քանի օրուան հանգիստի մը համար մեկնեցաւ Յաղպէ, Ընկերակցութեամբ Տ. Եղիշէ Արեգայի:



ՆՈՒԻՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

Ննօրհակալութեամբ կ'արձանագրեն նետեւեալ նուերներ:

Թարեպատական

Աղեքանակդրիայէն՝ Պ. Դրիգոր Ս. Մամուրեանի Եղիշ. Դահնեկան 20. —

Վանայէն՝ Օր. Անդրինէ Մինասեանէ ինքնանեակագործ կորիւուրայ մը Ս. Գիխաղի համար:

Երուսաղէմէն՝ Միւսիւ Բիէռ Բիշայէ, 14 բաքէթ Սրբարմաշէթ մոմ եւ 1 թիշեզ ձէթ Ս. Յակոբի Տաճարին համար:

Նիւեօքարենակ Սերաստացի՝ Պ. Վարդան Բարուակեանէ, Տուար 10. —


Տիգրանակերտցի՝ Այրի Տիկին Լուսիա Պագանականէ լիրա Պաղ. 1. Նոյնէն, սպիտակ մետաքսէ ժամարաբի շապիկ մը:

Ուրֆացի՝ Տիկին Մաքրունի Պասապեանէ Պաղ. Դկէ. 60.

Այնթաղցի՝ Տիկին Տօւու Փաշայեանէ. ինքնանեակագործ ծածկոց մը Ս. Գիխաղի Սեղանին համար:

Ժառ. Վարժարաբնին

Այրի Տիկին Հայկանուշ Խաչիկեան, յերուասաղէմ, որ երկար տարիներէ ի վեր ժառ. Վարժարանի հանդերձատան կը հսկէր անձնութերաբար. ժառ. Վարժարանին նուիրած է վեց Պաղեստինեան լիրա (լ. 6,000), հաստատութեան պայծառութեան համար գործածուելու նըուատսկաւ:



ՈՒՂՂԵԼԻՔ

Սիոնի Նոյեմբերի բացառիկ համարին մէջ ուղղել հետեւանդելը.

1. Էջ 345, Բ. սիւնակ, տող 21-29 ջնջել՝ «Բովանդակուրին նուազաց Հայ Ս. Կեղակցւոյ, եղիսա Մ. Տնահեան 1854»:

2. Էջ 359, Բ. սիւնակ, տող 18 «1917 6/19 ին» կարդալ «1917 նոյն. 6/19 ին»:

Proprietor — His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.
Editor — Father Karekine Bulbulian. Armenian Convent, Jerusalem.

Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.

